ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Ռ. Լ.

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մա-սին», որով հանրապետության խորհրդարանը հռչակում էր անկախ պետակա-նության հաստատման գործընթացի սկիզբը[1]: Անկախ հանրապետության հիմնմանը նպատակաուղղված այդ կարևոր իրավական փաստաթուղթը բաղ-կացած էր 12 կետից և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման հիմնական ուղիները:

Հռչակագրով Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում էր Հայաստանի Հան-րապետություն, կրճատ՝ Հայաստան, որն ունենալու էր իր դրոշը, զինանշանը և հիմնը (1990 թ. օգոստոսի 24-ին պետական դրոշ էր հաստատվել 1918 թվականի Առաջին հանրապետության եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, իսկ 1992 թ. ապրիլի 19-ին որպես զինանշան ընդունվեց այդ նույն Հանրապետության խորհրդանիշը)[2]:

Փաստաթղթում ամրագրվում էր, որ Հայաստանն ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրա-վությամբ: Նրա ամբողջ տարածքում գործելու էին միայն Հայաստանի Հանրա-պետության Սահմանադրությունը և օրենքները: Այստեղ բնակվող բոլոր քաղա-քացիների համար սահմանվելու էր Հայաստանի Հանրապետության քաղա-քացիություն, որի իրավունքը պետք է ունենար նաև արտերկրի հայությունը: Պետությունն ապահովելու էր իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զար-գացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավա-նանքից:

Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծելու էր սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մար-միններ: Նա պետք է ունենար ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբաժնի իրա-վունքը, և ինքն էր որոշելու իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը: Հայաստանը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարելու էր անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ էր հաստա-տելու այլ պետությունների հետ, մասնակցելու էր միջազգային կազմակերպու-թյունների գործունեությանը:

Հռչակագրում հանրապետության հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և բնական այլ պաշարներ հայտարարվում էին հայ ժողովրդի սեփա-կանություն: Հայաստանը սեփականության բազմաձևության հիման վրա որոշելու էր իր տնտեսավարման սկզբունքները և կարգը, հիմնելու էր սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառա-

---

[1] Հայաստանի Հանրապետություն, 23. VIII., 1991:

[2] Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Ե., 1995, էջ 11, 343:

յություններ: Փաստաթուղթն արտոնում էր խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում, բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն և իրավապահ մարմինների ու զինված ուժերի ապաքաղաքականացում: Հատուկ ընդգծվում էր հայերենի՝ որպես պետական լեզվի գործառնությունը հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում:

Առանձին հոդվածով արձանագրվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին[3]: Չնայած դեռևս 1988 թ. նոյեմբերի 22-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն օրենք էր ընդունել Օսմանյան Թուրքիայում 1915 թ. հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին, սակայն ցեղասպանության վերաբերյալ կետ Հռչակագրում ընդգրկելու հարցը խորհրդարանում բուռն տարակարծություններ առաջացրեց: Պատգամավորների մեծ մասը պահանջում էր այն մտցնել փաստաթղթի մեջ, մինչդեռ իշխող կուսակցության՝ ՀՀՇ-ի ներկայացուցիչները գտնում էին, որ ցեղասպանության ճանաչման հարցը, առավելապես պատմական ու բարոյահոգեբանական խնդիր լինելով, չպետք է ընդգրկվի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայությունների շարքում: Քվեարկությամբ, այնուամենայնիվ, վերոնշյալ հոդվածը Հռչակագրի մեջ մտցվեց:

Հռչակագիրը միաժամանակ հիմք էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի գործող Սահմանադրության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար: Սակայն գործող Սահմանադրությունը հակասում էր Հռչակագրի սկզբունքներին, ինչի հետևանքով գրեթե մշտապես սահմանադրական փոփոխությունների և ուղղումների անհրաժեշտություն էր առաջանում: Դրանից ելնելով՝ խորհրդարանը 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունեց առաջին սահմանադրական օրենքը՝ «Հայաստանի անկախության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որով մինչև նոր Սահմանադրության ընդունումը դադարեցվեցին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին հակասող սահմանադրական դրույթների գործողությունները[4]:

Հռչակագրով հայ ժողովրդի կյանքում պատմական նոր ժամանակաշրջանի սկիզբ դրվեց: Սկսվեց ծանր փորձությունների և դրժվարությունների մի նոր փուլ՝ կապված հայոց անկախ պետականության հաստատման գործընթացի հետ: Վերջինիս բնականոն ծավալման համար առաջին հերթին անհրաժեշտ էր կայունացնել հանրապետության ներքաղաքական իրավիճակը: Օգտվելով Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում տիրող ծայրահեղ լարված իրադրությունից՝ որոշ անկառավարելի զինված խմբեր ահաբեկում էին հանրապետության խաղաղ բնակչությանը, ինչը կարող էր հանգեցնել քաղա-

[3] Հայաստանի Հանրապետություն, 23. VIII ., 1991:

[4] Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 50:

քացիական պատերազմի բռնկման՝ իր բոլոր ծանր հետևանքներով: Դրա հետ մեկտեղ դեռևս 1990 թ. հուլիսին ԽՍՀՄ Նախագահ Մ. Գորբաչովը ստորագրել էր «ԽՍՀՄ օրենսդրությամբ չնախատեսված սպառազեն կազմավորումների ստեղծումն արգելելու և անօրինականորեն զենք պահելու դեպքում այն առգրավելու մասին» հրամանագիրը[5], որը կարող էր կենտրոնը օգտագործել Հայաստանում բացահայտ ռազմական ուժ կիրառելու համար: Ուստի հանրապետության իշխանությունները հայտարարեցին, որ իրենք ի վիճակի են կարճ ժամանակի ընթացքում սեփական ուժերով լուծելու Հայաստանի ներքաղաքական կայունությունն ապահովող խնդիրները՝ պայմանով, որ բացառվի արտաքին միջամտությունը: Աշխարհազորայիններին կոչ արվեց հավատարմության երդում տալ հանրապետության Գերագույն խորհրդին: Զոկատների մի մասը, այդ երդումը տալով, ընդգրկվեց ներքին գործերի նախարարության կառույցում ստեղծված Հատուկ գնդի կազմում, մարտիկների մի մասը զենքը հանձնելուց հետո ցրվեց տները, իսկ այն զինված կազմավորումները, որոնք չենթարկվեցին հանրապետության իշխանություններին, զինաթափվեցին և կազմալուծվեցին: 1991 թ. ապրիլի 26-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը», որը տարածվում էր հանրապետության պաշտպանության գործին կամավոր սկզբունքով մասնակցել ցանկացող քաղաքացիների վրա[6]: Կառավարության որոշմամբ ստեղծվեց նաև Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե, որը ձեռնամուխ եղավ ազգային բանակի ստեղծման աշխատանքներին: Հետագայում այդ կոմիտեի հենքի վրա ստեղծվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

Անկախ պետականության կայացումը ենթադրում էր հանրապետության տնտեսական վիճակի բարելավում: Այդ խնդիրը ծառացած էր ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների առջև, իսկ Հայաստանում այն անհամեմատ ավելի էր բարդանում՝ աղետի գոտու, բազմահազար փախստականների, Ղարաբաղյան հիմնախնդրի, շրջափակման և էներգետիկ ճգնաժամի առկայության հետևանքով: Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով Հայաստանի նոր իշխանությունները, ելնելով Անկախության հռչակագրի դրույթներից, ձեռնամուխ եղան տնտեսական վերափոխումների կենսագործմանը: Վերջիններիս և անկախության աստիճանական կայացման գործընթացը հայտարարվեց «անցման ժամանակաշրջան»[7], որի ընթացքում տնտեսական վերափոխումները նպատակաուղղվեցին համայնավարության հիմքերի շուտափույթ վերացմանն ու շուկայական հարաբերություններին անցնելու գլխավոր պայման հանդիսացող՝ գյուղատնտեսական հողերի, պետական ձեռնարկությունների և օբյեկտների մասնա-

---

[5] *Известия, 27.VII. 1990.*

[6] ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 113, ց. 16 5, գ. 298, թ. 1:

[7] **Մինասյան Է.**, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Ե., 2003, էջ 68:

վորեցմանը: Վերջինիս սկզբնական փուլն իրականացվեց ընդգծված քաղաքական բաղադրիչի գերակայությամբ և ակնհայտորեն արագացված քայլերով:

1990 թ. սեպտեմբերի 10-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին», ըստ որի՝ նրա տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի սեփականություն[8]: Սակայն այդ օրենքն ընդունելուց հետո բավարար հոգածություն չցուցաբերվեց պետական ունեցվածքի պահպանման նկատմամբ: Մասնավորապես, արդյունաբերական ձեռնարկությունների մետաղե սարքավորումների որոշ մասը ջարդոնի անվան տակ հիմնականում անձնական շահախնդրական նպատակներով կա՛մ վաճառվեց, կա՛մ էլ փոխանակվեց արտասահմանյան էժանագին ապրանքների հետ:

1990 թ. հոկտեմբերին Նախարարների խորհրդի որոշմամբ ստեղծվեց «ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գծով պետական հանձնաժողով», որի վրա դրվեցին արմատական տնտեսական բարեփոխումների հիմունքների ու սկզբունքների մշակման, ազատական տնտեսության անցման և զարգացման մեխանիզմների ապահովման խնդիրները[9]: Պետական մենաշնորհից՝ արտադրության միջոցների բազմակացութաձև սեփականության անցնելու ու շուկայական հարաբերությունների ձևավորման հիմք ծառայեցին համապատասխանաբար 1990 թ. հոկտեմբերի 31-ին և 1991 թ. փետրվարի 13-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ու «Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման հիմունքների մասին» օրենքները[10]:

Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից առաջինը ձեռնամուխ եղավ հողի սեփականաշնորհմանը: Դա նախ և առաջ պայմանավորված էր շրջափակման ու տնտեսական խորը ճգնաժամի մեջ գտնվող հանրապետության բնակչության պարենային ապահովվածության խնդրի լուծման հրատապությամբ: ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունվարի 29-ին ընդունեց Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը և «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը[11]: Այդ օրենքով լուծարվեցին հանրապետությունում եղած շուրջ 900 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի արտադրանքի ավելի քան 90 %-ը: Դրանց փոխարեն ձևավորվեցին ավելի քան 320 հազար անհատական տնտեսություններ, որոնց փոխանցվեցին հողերի 66 %-ը, անասունների 80 %-ը և մնացած գրեթե ամբողջ հիմնական միջոցները: Հողերի սեփականաշնորհման

---

[8] Հայաստանի Հանրապետություն, 20. VII., 1991:

[9] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 74:

[10] Հայաստանի Հանրապետություն, 20. VII. , 1991:

[11] Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), էջ 67-106:

քաղաքականությունն ամրապնդվեց կառավարության մի շարք որոշումներով[12]: Հողի սեփականատերեր դարձան բոլոր գյուղաբնակները և նման ցանկություն հայտնած՝ այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները: Ագրարային ոլորտի արմատական բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան գյուղական բնակչության աշխատանքի ապահովման և նրա նյութական շահագրգռվածության բարձրացման վրա: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքերի կառուցվածքը, սկսեցին տվյալ պայմաններին համապատասխան առավել արդյունավետ բույսեր մշակել և անասուններ պահել: Նրանք այլևս հարկադրված չէին կատարելու պլանային առաջադրանքները: Հող ստացավ նաև փախստականների մի մասը, վերաբնակվեցին նախկինում լքված շատ գյուղեր: Այդ ամենի շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունն այնպիսի խոր ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը և համեմատաբար հեշտ կարողացավ հարմարվել շուկայական հարաբերություններին:

Սակայն գյուղատնտեսության ոլորտում մասնավոր սեփականատիրության անցումը բարդ և տևական գործընթաց է, որը Հայաստանում իրականացվեց հապճեպ ու ոչ հիմնովին նախապատրաստված: Այն կատարվեց առանց հողի անհատական մշակման պայմանների, գյուղատնտեսական տեխնիկայի և դրա օգտագործման հնարավորությունների ու այլ խնդիրների խոր քննության, ինչի հետևանքով նոր դժվարություններ ծագեցին, և կորուստներ տեղի ունեցան: Գրեթե լիովին քայքայվեց հանրապետության ագրոարդյունաբերական համալիրը, խիստ կրճատվեց անասունների ու թռչունների գլխաքանակը, նվազեց դրանց մթերատվությունը, փոշիացավ գյուղտեխնիկան: Չմշակվեց նաև գյուղացուն անհրաժեշտ պետական աջակցություն ցուցաբերելու ամբողջական քաղաքականություն: Արդյունքում հողատեր գյուղացին, առանց գյուղատնտեսական տեխնիկայի, նյութատեխնիկական մատակարարման, ագրոզոոտեխնիկական և այլ անհրաժեշտ ծառայությունների սպասարկման համակարգի, հայտնվեց ծանր վիճակում, ինչն աստիճանաբար հանգեցրեց ցանքատարածությունների կրճատմանն ու գյուղատնտեսական մթերքների գների աճին:

Փաստորեն, 1990-1991 թթ. հանրապետության տնտեսակարգի արմատական փոփոխությանը նպատակաուղղված վերափոխումների իրականացման ընթացքում գրեթե անտեսվում էին սոցիալական հիմնահարցերը:

Հայաստանի նոր իշխանությունները քայլեր ձեռնարկեցին նաև հասարակության ժողովրդավարացման ուղղությամբ: 1990 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ[13]: 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանն ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»

[12] Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 80-81:
[13] Հայաստանի Հանրապետություն, 20. VII., 1991:

օրենքը[14], որով հանրապետությունում ստեղծվեց բազմակուսակցական համակարգ: Երկարամյա ընդմիջումից հետո հայրենիքում վերստին գործելու իրավունք ստացան ազգային ավանդական Հայ հեղափոխական դաշնակցություն, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունները: 1991 թ. ընթացքում հանրապետությունում գրանցվեցին 20 կուսակցություններ[15], որոնց թվում՝ Հայաստանի հանրապետական, Ցեղապաշտական, Կոմունիստական, Դեմոկրատական, Հայոց համազգային շարժում, Ազգային վերածննդի կուսակցությունները, Հայոց քրիստոնեադեմոկրատական միությունը, Ազգային ինքնորոշում միավորումը, Սահմանադրական իրավունք միությունը և այլն: Այս կուսակցությունների մեծ մասի կազմավորումը սկսվել էր 1980-ական թթ. վերջերից և հիմնականում կապված էր ԽՍՀՄ-ում տեղի ունեցող քաղաքական գործընթացների, հատկապես արցախյան շարժման ծավալման հետ: Կուսակցություններին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին իրավունք տրվեց օրենքի սահմաններում ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը: Թեև նոր գրանցված կուսակցությունները տարբեր խնդիրներ ու նպատակներ էին հետապնդում, սակայն ակտիվորեն ներգրավվեցին անկախ պետականության հաստատման գործընթացում:

Քայլեր ձեռնարկվեցին նաև կուսակցությունների գործունեության համար հավասար պայմաններ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով 1991թ. ապրիլի 17-ին հանրապետության Գերագույն խորհուրդը «Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայաստանի նախկին լենինյան կոմունիստական երիտասարդական միության ունեցվածքն ազգայնացնելու մասին» որոշում ընդունեց[16]: Վերջինիս հիման վրա ՀՀ Նախարարների խորհուրդը համապատասխան որոշում ընդունեց, որով հանրապետության քաղաքային և շրջանային խորհուրդների գործկոմներին հանձնարարվեց ստեղծել ընդունման հանձնաժողովներ՝ կոմունիստական կուսակցությանն ու կոմերիտմիությանը պատկանող ամբողջ ունեցվածքն ի պահ վերցնելու համար: Միաժամանակ հանձնարարվեց Հայաստանի կոմկուսի և ՀԼԿԵՄ հաշիվներից չկատարել ծախսերի գծով գործառնություններ, բացի կոմկուսի Կենտկոմի հրատարակչությունից ու տպարանից: Խստագույնս դատապարտելով այդ որոշումները՝ Կենտկոմի պլենումը դրանց ընդունման փաստը որակեց իբրև Հայաստանի կոմունիստական կուսակցության վերջնական կազմալուծմանը նպատակաուղղված՝ ոչ իրավական ու ժողովրդավարության սկզբունքներին հակասող քաղաքական քայլ[17]: Գրեթե նույնանման հայտարարությամբ հանդես եկավ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը, որն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Նախագահին և երկրի Գերագույն խորհրդին[18]: 1991 թ. ապրիլի 23-ին

---

[14] Նույն տեղում:

[15] Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում, ՄԱԿ-ի Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2001, էջ 46:

[16] Երեկոյան Երևան, 19. IV., 1991:

[17] Հայաստան, 20. IV., 1991:

[18] *Правда, 22. IV., 1991:*

հրապարակվեց Մ. Գորբաչովի հրամանագիրը, որում հիշյալ որոշումները գնահատվում էին իբրև երկրի Սահմանադրությանն ու օրենքներին հակասող, քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների իրավունքները ոտնահարող ակտեր[19]: Դա, փաստորեն, յուրահատուկ զգուշացում էր, որին հակադրվելը կարող էր ծանր հետևանքներ ունենալ: Սակայն Հայաստանի իշխանություններն անդրդվելի էին և շարունակում էին առաջնորդվել անկախ իրավական պետության ստեղծմանը նպատակաուղղված բարենորոգումների ուղեգծով: 1991 թ. հունիսի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որով հանրապետությունում ամրագրվեց դավանանքի ազատությունը[20]:

Այսպիսով, թեև Հայաստանը դեռևս չէր հռչակել իր անկախությունը, սակայն 1990 թ. օգոստոսից ի վեր տնտեսական և ներքաղաքական ոլորտներում արդեն գործառում էր իբրև կենտրոնից անկախ ինքնիշխան պետություն, ինչը միութենական իշխանություններին առիթ տվեց ուժեղացնելու բռնությունները Լեռնային Ղարաբաղում և չհայտարարված տնտեսական պատժամիջոցներ կիրառելու Հայաստանի Հանրապետության նկատմամբ (հատկացվող նյութա-տեխնիկական, ֆինանսական ֆոնդերի կրճատում, շրջափակման սաստկացման նպաստում և այլն):

Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունների գլխավոր խնդիրներից էր Արցախին համակողմանի պետական զորակցություն ցույց տալը: 1990 թ. օգոստոսի 15-ին Հայաստանի Գերագույն խորհրդում ստեղծվեց Արցախի հարցերի հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ մտան նաև ԼՂԻՄ-ից ընտրված պատգամավորներ: Ելնելով Լեռնային Ղարաբաղում տիրող լարված իրադրու-թյունից՝ սեպտեմբերի 5-ին հանրապետության խորհրդարանը հանդես եկավ հայտարարությամբ, որով իրադրությունը կայունացնելու նպատակով կենտրոնին առաջարկեց ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի և խորհրդային բանակի ստորաբաժանումները տեղաբաշխել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի վարչական սահմանների երկայնքով, վերացնել Ադրբեջանի հանրապետական Կազմկոմիտեն և վերականգնել Լեռնային Ղարաբաղի մարզային ու տեղական խորհուրդները, վճռական միջոցներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի շրջափակումը վերացնելու համար[21]: Սակայն միութենական իշխանությունները ոչ միայն չարձագանքեցին այս հայտարարությանը, այլև սաստկացրին մարզի հայ բնակչության նկատմամբ կիրառվող կամայա-կանությունները՝ դրանով իսկ շարունակելով աջակցել Ադրբեջանի կողմից իրականացվող Լեռնային Ղարաբաղի հայաթափման քաղաքականությանը: Արցախում գտնվող ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի անձնակազմը, ենթարկվելով Ադրբեջանի հանրապետական Կազմկոմիտեին, փաստորեն, կատարում էր պատժիչ դեր՝ բռնի

---

[19] Նույն տեղում, *23. IV., 1991*:

[20] Անկախության անցումային 10 տարիները Հայաստանում, ՄԱԿ-ի Մարդկային զարգացման ազգային զեկույց, էջ 41:

[21] Երեկոյան Երևան, 24. VI., 1991:

տեղահանելով հայ ազգաբնակչությանը: Զանգվածային բռնությունների ալիքն իր գագաթնակետին հասավ 1991 թ. ապրիլին, երբ խորհրդային ու ադրբեջանական զինված ուժերը սկսեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասի հայաբնակ գյուղերի էթնիկ զտումները, որով հակամարտությունը, ըստ էության, ռազմականացվեց: Մինչև ատամները զինված ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատները, ԽՍՀՄ ներքին զորքերի օժանդակությամբ իրականացնելով «Օղակ» օպերացիան, հրասայլերի և զրահամեքենաների ուղեկցությամբ հարձակվեցին Շահումյանի և Խանլարի շրջանների հայկական գյուղերի վրա: Հիմնականում որսորդական հրացաններով զինված տեղի ազգաբնակչությունը, աշխարհազորայինների հետ միասին անհավասար կռվի ելավ՝ հանուն իր ազատության: Հատկապես թեժ մարտեր ծավալվեցին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքներում, որոնց ժամանակ հերոսաբար զոհվեցին ինքնապաշտպանության ջոկատների մարտիկներ Սիմոն Աչիքգյոզյանը, Թաթուլ Կրպեյանը, Մարտիրոս Շահնազարյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Զարգանդ (Հրաչ) Դանիելյանը և ուրիշներ: Զավթիչները գրավեցին և ավերեցին Գետաշենն ու Մարտունաշենը. բնակչությունը ստիպված լքեց իր հայրենի հողը: Ընդհանուր առմամբ, բռնագաղթի ենթարկվեցին հայկական քսանչորս գյուղերի բնակիչներ, ինչը Հայաստանի և ԼՂԻՄ-ի իշխանություններին հարկադրեց ազատամարտիկների խմբեր կազմելու, որոնք ժամանակի ընթացքում դարձան Լեռնային Ղարաբաղի բանակի միջուկը:

Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասում ծավալված հիշյալ իրադարձություններից հետո Ադրբեջանի իշխանությունները կենտրոնի աջակցությամբ ձեռնամուխ եղան բռնի ուժով ամբողջ Արցախի վերջնական հայաթափմանը: Բայց Լեռնային Ղարաբաղի ողջ հայությունը ոտքի ելավ՝ զենքով պաշտպանելու իր հայրենիքը: Փաստորեն, 1991 թ. մայիս-հունիսից մարզում հայ-ադրբեջանական ազգամիջյան իսկական պատերազմ բռնկվեց, որն աստիճանաբար ավելի ծավալվեց: Պատերազմն ընդհուպ մոտեցավ Հայաստանի սահմաններին: Հանրապետության սահմանամերձ բնակավայրերն անընդհատ գնդակոծվում էին Ադրբեջանի տարածքում տեղակայված խորհրդային բանակի զորքերի և տեղի օմոնականների կողմից: Դրանով չբավարարվելով՝ պատժիչները հաճախ ներխուժում էին հայկական բնակավայրեր, ավերում և թալանում դրանք, բռնություններ կիրառում խաղաղ բնակչության հանդեպ: Բարբարոսության ցայտուն դրսևորում էին մայիս ամսին Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղում կատարված դեպքերը, երբ խորհրդային զինծառայողները գնդակահարեցին սահմանը հսկող տասնհինգ հայ միլիցիոներների[22]:

Հայաստանի նկատմամբ կենտրոնի վարած ահաբեկչական քաղաքականության սաստկացումը պայմանավորված էր կայսրության փլուզումը կասեցնելու նրա ձգտումով, քանի որ մեր հանրապետությունն ընթանում էր անկախացման ճանապարհով: Ելնելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրի դրույթներից ու նպատակներից՝ 1991 թ. մարտի 1-ին ՀՀ Գերագույն

[22] **Ազիզբեկյան Ռ. Լ.,** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Ե., 1992, էջ 77:

խորհուրդը որոշեց նույն թվականի սեպտեմբերի 21-ին հանրապետությունում անցկացնել ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե[23]: Հավատարիմ մնալով այս որոշմանը՝ Հայաստանի Հանրապետությունը մերձբալթյան հանրապետությունների,Վրաստանի և Մոլդովայի հետ միասին չմասնակցեց կենտրոնի նախաձեռնությամբ ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ին անցկացված միութենական հանրաքվեին՝ այն որակելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասող: Միաժամանակ Հայաստանը մինչև սեպտեմբերի 21-ը չմասնակցեց նաև կենտրոնի և հանրաքվեին մասնակցած ինը հանրապետությունների (Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ադրբեջան) կողմից (9+1) կողմից մշակվող միութենական նոր պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին, որի ստորագրմամբ Կրեմլը հույս ուներ անկախացող հանրապետությունները պահպանել միության կազմում: Չնայած տվյալ հարցում կենտրոնի ակնհայտ շտապողականությանը՝ որոշ հանրապետություններ, մասնավորապես Ռուսաստանն ու Ուկրաինան, լրջորեն խոչընդոտում էին այդ պայմանագրի ստորագրմանը, ինչի հետևանքով այն հետաձգվեց մինչև 1991 թ. սեպտեմբերի կեսերը: Միութենական նոր դաշնագրի ստորագրման փակուղի մտնելն է՛լ ավելի թուլացրեց կենտրոնի դիրքերը, որոնց ամրապնդման միակ ուղին խորհրդային ղեկավարության պահպանողական թևի ներկայացուցիչները տեսնում էին ռազմական բռնապետություն հաստատելու մեջ: Այդ նպատակով նրանք 1991 թ. օգոստոսի 19-ին Մոսկվայում կազմակերպեցին խռովություն: Սակայն ժողովրդավարների վճռականության շնորհիվ հետադիմական ուժերի հեղաշրջման այս փորձն անհաջողության մատնվեց: Օգոստոսյան այդ օրերին Հայաստանի ղեկավարության որդեգրած զուսպ և հավասարակշիռ դիրքորոշման շնորհիվ մեր հանրապետությունը, ի տարբերություն միութենական մի շարք հանրապետությունների, խուսափեց քաղաքական ցնցումներից: Ժողովրդավարական ուժերի հաղթանակը Մոսկվայում հսկայական նշանակություն ունեցավ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի համար: Այն, փաստորեն, արագացրեց կոմունիստական կայսրության վերջնական փլուզման գործընթացը, որն արտահայտվեց նաև ռազմական բռնապետության հաստատման փորձով իրեն վարկաբեկած Կոմունիստական կուսակցության լուծարումով: ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ելցինի հրամանագրով արգելվեց ԽՄԿԿ գործունեությունը Ռուսաստանի տարածքում: 1991 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության 29-րդ համագումարը որոշեց դադարեցնել ՀԿԿ գործունեությունը[24]:

Երբ ակնհայտ դարձավ Խորհրդային Միության փլուզման անխուսափելիությունը, 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հռչակեց 1918-1920 թթ. գոյություն ունեցած անկախ պետականության վերականգնումը[25]:

---

[23] Հայաստանի Հանրապետություն, 5. III., 1991:

[24] ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 1, g. 84 , գ. 1, թ. 68-69, g. 128, գ . 3, թ. 1:

[25] *НКР. История и современность, Степанакерт, 1998, с. 9.*

Հայտարարելով ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին՝ հարևան հանրապետությունը նպատակ էր հետապնդում իր հետ դուրս բերել նաև Լեռնային Ղարաբաղը: Սակայն 1990 թ. ապրիլի 3-ից գործող՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[26] ԽՍՀՄ օրենքով Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնվող ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և համահավաք ապրող ազգային խմբերին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար լուծելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը: Ուստի այդ օրենքը Լեռնային Ղարաբաղի հայությանը թույլ էր տալիս օրինական ճանապարհով բաժանվելու նորանկախ Ադրբեջանից և դառնալու սեփական ճակատագրի տերը: Մանավանդ որ Ադրբեջանի Անկախության հռչակագրում շեշտված էր, թե այն ԽՍՀՄ կազմից դուրս է գալիս 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության տարածքի սահմաններով, իսկ Լեռնային Ղարաբաղը երբեք այդ պետության մաս չի կազմել:

Առաջնորդվելով ԽՍՀՄ Սահմանադրությամբ և նշյալ օրենքով՝ 1991 թ. Սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում կայացած՝ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստը բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ, արտահայտելով Արցախի ժողովրդի կամքը, ընդունեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»[27]: Նորահռչակ հանրապետությունը (համառոտ՝ ԼՂՀ-ն) ներառեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ու դրան կից Շահումյանի շրջանը: Նրա տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործելու էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև նշյալ Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին չհակասող գործող մյուս օրենքները:

Փաստորեն, Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը՝ որպես ինքնավար կազմավորում, և Շահումյանի շրջանը՝ իբրև ազգային փոքրամասնությամբ համահավաք բնակեցված տարածք, մինչև ԽՍՀՄ իրավաբանական գոյության ավարտն իրականացրին իրենց պետաիրավական կարգավիճակների որոշմանը նպատակաուղղված՝ Խորհրդային Միության գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլերը: Հետևաբար, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունները ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում զուրկ են իրավական հիմքերից:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ևս նման հիմքեր գոյություն չունեն, քանի որ Ադրբեջանը, անկախություն հռչակելով, իրեն հայտարարել է 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդը, որը չի ճանաչել Ազգերի լիգան այդ հանրապետության մեջ մտնող տարածքների հստակ սահմանների որոշման դժվարության պատճառով:

---

[26] **Золян Сурен**, *Нагорный Карабах: проблема и конфликт, Е., 2001, с. 111.*

[27] Հայաստանի Հանրապետություն, 3. IX., 1991:

Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունները զուրկ են նաև պատմական հիմքերից, քանզի վերջինս երբևէ ադրբեջանական անկախ պետության կազմում չի եղել:

Տասնամյակներ շարունակ ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու՝ արցախահայության բոլոր խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան՝ Ադրբեջանը կիրառել է բռնություններ, ոտնահարել հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Ուստի Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունեն նաև բարոյական հիմքեր:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Ադրբեջանն իրավական, պատմական և բարոյական հավակնություններ ունենալ չի կարող:

Սակայն Ադրբեջանը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել այս իրողությունը: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը որակեց իբրև դավադրություն Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ, և հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարեց խափանել այդ հռչակագրի իրականացման ցանկացած փորձ՝ պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին: Միաժամանակ հանրապետական Կազմկոմիտեին հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ[28]: Սակայն այս հանձնարարականները գործնականում անհնար էր իրականացնել, քանի որ մարզի մեծ մասը, գտնվելով հայկական ուժերի վերահսկողության ներքո, անհասանելի էր Ադրբեջանի պաշտոնական անձանց համար: Ուստի Ադրբեջանը սաստկացրեց ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում:

Ղարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակի սրումը լրջորեն խոչընդոտում էր Հայաստանի անկախության գործընթացի բնականոն ծավալմանը: Անցումային դժվարին փուլում գտնվող հանրապետությունն իր անկախության հաստատմանը նպատակաուղղված պետական շինարարությունը, ըստ էության, իրականացնում էր պատերազմական պայմաններում: Մինչդեռ պետական կառավարման խորհրդային համակարգից անցումը նրանից էապես տարբերվող միանգամայն նոր համակարգի, զգալի նյութական և ֆինանսական միջոցներ էր պահանջում: Իշխանության նոր մարմինների ձևավորման գործընթացը սկսվել էր 1990 թ. մայիսին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո, երբ խորհուրդներից անցում կատարվեց դեպի խորհրդարանական հանրապետություն: Ընդ որում, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը կենտրոնացված էր խորհրդարանի ձեռքում, ապա գործադիր իշխանությունը բաժանված էր վարչապետի, նրա կաբինետի և Գերագույն խորհրդի նախագահության միջև: Փաստորեն, հանրապետությունում առկա էր պետական կառավարման համակարգի նախկին և նոր կառույցների

[28] **Ուլուբաբյան Բագրատ,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Ե., 1997, էջ 269:

զուգորդում՝ կառավարման մարմինների ոչ օպտիմալ կառուցվածքներով և հնից ժառանգած ավանդույթներով: Արդյունքում իշխանության թևերի տարբեր մակարդակների մարմիններին բնորոշ էին միմյանց գործառույթների կրկնությունները, հանձնարարականների անճշտությունները, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման բացակայությունը և այլն:

Ելնելով պետական կառավարման նոր՝ արդյունավետ համակարգի ձևավորման անհրաժեշտությունից և առաջնորդվելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ Անկախության մասին հռչակագրի դրույթներով՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 25-ին հիմնեց Հանրապետության Նախագահի պաշտոնը, որով հաստատեց նախագահական կառավարման համակարգ՝ վերջինիս զիջելով իր լիազորությունների մի մասը[29]: Նույն թվականի օգոստոսի 1-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» օրենքը, համաձայն որի՝ ՀՀ Նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը[30]: Դրանով իսկ, ըստ էության, ուրվագծվեց անկախության ուղիով ընթացող Հայաստանի Հանրապետության ապագա պետական կարգը:

Այսպիսով, Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մեկ տարի հետո հանրապետության իշխանությունների կողմից տնտեսական, քաղաքական, պետաիրավական և վարչական ոլորտներում հետևողականորեն իրականացված արմատական վերափոխումների շնորհիվ հայոց անկախ պետականության հռչակման որոշակի նախադրյալներ էին ստեղծվել: 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 2 մլն 43 հազ. մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94,39 %-ը), «այո» ասաց անկախությանը[31]: Նույն թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն[32]:

НАЧАЛО ПРОЦЕССА НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ

АЗИЗБЕКЯН Р. Л.

Резюме

23 августа 1990 г. принятием ,,Декларации о независимости Армении” новоизбранный Верховный совет республики возвестил о начале процесса становления независимой государственности. Этот важный правовой документ

---

[29] ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 113, ց. 16 5, գ. 415, թ. 42:

[30] Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ), էջ 158-162:

[31] Հայաստանի Հանրապետություն, 24. IX., 1991:

[32] Նույն տեղում:

состоял из 12 пунктов, наметивших основные направления политического, экономического и культурного развития Армении.

С принятием Декларации в жизни армянского народа начался новый исторический этап, связанный с процессом становления независимой государственности. Данный этап стал периодом новых тяжелых испытаний и трудностей. Карабахский конфликт постепенно превращался в широкомасштабное военное противостояние, что, естественно, в большей степени сказывалось на социально-экономическом и политическом положении Армении. Еще более усилилась ее блокада. Углубился энергетический кризис. Резко снизился уровень жизни населения. В подобных тяжелых условиях новоизбранные власти Армении приступили к осуществлению положений Декларации о независимости.

Исходя из необходимости улучшения экономического положения республики, власти приступили к осуществлению коренных экономических преобразований, которые были направлены на скорейшее устранение основ коммунизма и внедрение рыночных отношений, в основном посредством приватизации сельскохозяйственных земель, государственных предприятий и объектов. В 1990-1991 гг. был принят ряд законов, обеспечивающих переход экономики от государственного монополизма к рыночным отношениям. Начальный этап приватизации был осуществлен подчеркнутым паритетом политического компонента и явно ускоренными темпами, с игнорированием социальных проблем.

Предпринимались шаги и по демократизации общества. Были приняты постановления об аполитизации государственных органов, предприятий, учреждений, военных подразделений, общественно-политических организаций, о свободе совести и религиозных организаций и т. д. В результате в республике сформировалась многопартийная система, всем партиям и общественным организациям было предоставлено право в рамках закона свободно выражать свое мнение.

Таким образом, хотя Армения еще не провозглашала свою независимость, однако, начиная с августа 1990 г., она в экономической и внутриполитической сферах действовала как независимое от центра суверенное государство, что дало повод властям усилить репрессии в Нагорном Карабахе и применить экономические санкции в отношении Армении. Через год после принятия Декларации о независимости были созданы определенные предпосылки для провозглашения независимой государственности.